ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**~~

~~Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝~~

~~**փոստային կապ՝** փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն ապահովող կապի տեսակ, որը տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր է.~~

~~**փոստային առաքանի՝** հասցեագրված նամակագրական թղթակցություն, փոստային ծանրոցներ ու փոստային բեռնարկղեր, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակություններ.~~

~~**փոստային առաքում՝** փոստային առաքանու ընդունում, մշակում, փոխադրում և հանձնում հասցեատիրոջը.~~

~~**միջազգային փոստային կապ՝** տարբեր պետությունների իրավասության ներքո գտնվող փոստային կապի օպերատորների միջև փոստային առաքանու փոխանակում.~~

~~**նամակագրական թղթակցություն՝** հասարակ և գրանցվող նամակներ, փոստային բացիկներ, սեկոգրամներ, փաթեթներ և փոքր փաթեթներ.~~

~~**գնահատված փոստային առաքանի՝** փոստային առաքանի, որն ընդունվում է ուղարկողի կողմից ներդրվածքի արժեքի գնահատմամբ, ուղարկողին անդորրագրի հանձնումով, և հասցեատիրոջը հանձնվում է ստորագրությամբ: Գնահատված արժեքի գումարի առավելագույն չափը սահմանում է փոստային կապի օպերատորը.~~

~~**սեկոգրամ՝** բացառապես կույրերի համար նախատեսված փոստային առաքանի, որը հանձնվում է բաց տեսքով, սեկոգրաֆիայի եղանակով գրված նամակագրական~~

~~հաղորդակցություններով և հրատարակություններով, սեկոգրաֆիայի նշաններով՝ կլիշեներով, ձայնագրություններով, տիֆլոտեխնիկական միջոցներով.~~

~~**դրամական միջոցների փոստային փոխադրություններ՝** «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն դրամական (փողային) փոխանցումներ.~~

~~**փոստային կապի ծառայություններ՝** գործողություն կամ գործունեություն փոստային առաքանու ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման գծով.~~

~~**փոստային կապի ունիվերսալ ծառայություններ՝** Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոստային կապի ծառայություններ՝ նամակագրական թղթակցության, մինչև 20 կիլոգրամ քաշով ծանրոցների և գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքման գծով, ինչպես նաև «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փաստաթղթերի հատուկ առաքում.~~

~~**սուրհանդակային կապի ծառայություն՝** փոստային կապի գործունեության տեսակ, որի դեպքում փոստային առաքանին առաքման ամբողջ ժամանակահատվածում՝ ուղարկողից մինչև հասցեատեր, ուղեկցվում է միևնույն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից.~~

~~**հատուկ կապի ծառայություն՝** սուրհանդակային կապի ծառայության տեսակ, որի դեպքում իրականացվում է հատուկ առաքանիների ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը.~~

~~**հատուկ առաքանի՝** փոստային առաքանի, որը պարունակում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով պահպանվող գաղտնի տեղեկություններ և առարկաներ, թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր, ինչպես նաև դրանցից պատրաստված զարդեր, որոնք ուղարկվում կամ ստացվում են իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից.~~

~~**փոստային կապի ծառայություններից օգտվող՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմիններ, որոնք~~

~~օգտվում են փոստային կապի ծառայություններից կամ փոստային կապի օպերատորի կողմից մատուցվող դրամական փոստային փոխադրությունների ծառայություններից.~~

~~**սուրհանդակային կապի ծառայություններից օգտվող՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմիններ, որոնք օգտվում են սուրհանդակային կապի ծառայություններից.~~

~~**փոստային կապի ծառայությունների մատուցման ժամկետ՝** փոստային կապի որոշակի ծառայությունների մատուցման ժամկետներից և նորմատիվներից բաղկացած ամբողջություն՝ փոստային կապի օպերատորի սահմանած առանձին տեխնոլոգիական գործողությունների կատարման համար.~~

~~**սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման ժամկետ՝** սուրհանդակային կապի որոշակի ծառայությունների մատուցման ժամկետներից և նորմատիվներից բաղկացած ամբողջություն՝ սուրհանդակային կապի օպերատորի սահմանած առանձին տեխնոլոգիական գործողությունների կատարման համար.~~

~~**հսկիչ ժամկետներ՝** փոստային առաքանու և դրամական միջոցների փոստային փոխադրությունների՝ փոստային կապի ընդունման վայրից մինչև փոստային կապի օբյեկտի հանձնման վայրն առաքման, ինչպես նաև փոստային կապի օբյեկտներում դրանց վերամշակման առանձին գործառնությունների համար սահմանված ժամանակ.~~

~~**փոստային կապի ծառայությունների մատուցման սակագին՝** փոստային կապի ծառայությունների մատուցման վճարման համար սահմանված չափ.~~

~~**սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման սակագին՝** սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման վճարման համար սահմանված չափ.~~

~~**փոստային կապի օպերատոր՝** փոստային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի համաձայն՝ պահպանելով սույն օրենքով սահմանված փոստային կապի օպերատորի կանոնակարգով սահմանված պայմանները և պահանջները.~~

~~**սուրհանդակային կապի օպերատոր՝** սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր~~

~~գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի համաձայն՝ պահպանելով սույն օրենքով սահմանված սուրհանդակային կապի օպերատորի կանոնակարգով սահմանված պայմանները և պահանջները.~~

~~**կանոնակարգ՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած փոստային կապի գործունեության լիցենզիայի շրջանակներում փոստային կապի օպերատորի կամ սուրհանդակային կապի օպերատորի գործունեություն իրականացնող անձանց՝ տվյալ գործունեությանը վերաբերող տարածքային, տրանսպորտային միջոցների, տեխնիկական և տեխնոլոգիական նվազագույն չափանիշներ, ինչպես նաև սույն օրենքից և այլ իրավական ակտերից բխող պարտադիր պայմաններ և պահանջներ սահմանող իրավական ակտ.~~

~~**փոստային կապի ազգային օպերատոր՝** փոստային կապի օպերատոր, որը մատուցում է փոստային կապի ունիվերսալ ծառայություններ և կրում է Հայաստանի Հանրապետության փոստի խորհրդանիշը.~~

~~**փոստային կապի օբյեկտներ՝** փոստային կապի օպերատորի առանձնացված ստորաբաժանումներ՝ փոստի տեսակավորման և փոխադրման կենտրոն, օդանավակայաններին կամ երկաթուղային կայարաններին կից փոստի փոխադրման բաժանմունքներ, փոստափոխանակման կետեր, փոստային բաժանմունքներ, փոստային շարժական կետեր և այլն.~~

~~**փոստային կապի երթուղի՝** փոստային կապի օբյեկտների միջև փոստային տրանսպորտի երթուղի.~~

~~**փոստային կապի ցանց՝** փոստային կապի օբյեկտների և փոստային երթուղիների ամբողջություն.~~

~~**փոստային կապի միջոցներ՝** փոստային կապի ծառայություններ մատուցելու համար օգտագործվող շենքեր, շինություններ, ոչ բնակելի տարածքներ, սարքավորումներ և փոստային տրանսպորտ, փոստային ծրարներ, բացիկներ և փոստային տարա.~~

~~**սուրհանդակային կապի միջոցներ՝** սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու համար օգտագործվող շենքեր, շինություններ, ոչ բնակելի տարածքներ, սարքավորումներ և տրանսպորտ.~~

~~**փոստային վճարման պետական նշաններ (նիշեր)՝** փոստային նամականիշեր, ֆրանկոմեքենաների և նիշավորող մեքենաների դրոշմներ կամ այլ նիշեր, որոնք գործողության մեջ են դրվում փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից և հաստատում են փոստային կապի ծառայությունների մատուցման վճարումը.~~

~~**Ֆրանկոմեքենա և նիշավորող մեքենա՝** նամակագրական թղթակցության վրա փոստային կապի ծառայությունների մատուցման վճարումը, տվյալ թղթակցության ընդունման ամսաթվերը և այլ տեղեկատվություն հաստատող փոստային վճարման պետական նշաններ դրոշմելու համար նախատեսված մեքենաներ.~~

~~**փոստային դասիչ՝** փոստային կապի օբյեկտին տրվող փոստային հասցեի պայմանական թվային նիշավորում, որը գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և պարտադիր է փոստային կապի օպերատորների համար.~~

~~**անվանական իր՝** սարք (դրոշմ), որը նախատեսված է փաստաթղթերի և փոստային առաքանիների դրոշմվածքների համար՝ նշելով փոստային կապի օբյեկտի անվանումը, փոստային առաքանու ընդունման և հանձնման ամսաթիվը և այլ տեղեկատվություն.~~

~~**փոստարկղ՝** հասարակ նամակների և փոստային բացիկների հավաքման համար նախատեսված հատուկ փակվող արկղ.~~

~~**հասցեատեր (ստացող)՝** փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվող, որին հասցեագրված են փոստային առաքանի, դրամական միջոցների փոստային փոխադրություններ, հեռագրային կամ այլ հաղորդագրություններ.~~

~~**փոստային բաժանորդային արկղ՝** հասցեատերերի կողմից փոստային առաքանի ստանալու համար նախատեսված հատուկ փակվող արկղ.~~

~~**փոստային բաժանորդային պահարան՝** հասցեատերերի կողմից փոստային առաքանի ստանալու համար բնակելի շենքերում, ինչպես նաև հանձնման տեղամասերում տեղադրվող փակվող խցիկներով հատուկ պահարան.~~

~~**փոստային անվանական պահարան՝** հասցեատերերի կողմից փոստային առաքանի ստանալու համար որոշակի ժամկետով տրամադրվող՝ փոստային կապի օբյեկտներում տեղադրվող փակվող խցիկներով հատուկ պահարան.~~

~~**հենակետային փոստարկղ՝** փոստային առաքանին ժամանակավորապես պահելու կամ հասցեատերերի կողմից փոստային առաքանի ստանալու համար հանձնման կետերում նախատեսվող հատուկ փակվող պահարան։~~

~~Սույն օրենքով սահմանված դրամական փոստային փոխադրություններին վերաբերող դրույթները չեն տարածվում սուրհանդակային կապի օպերատորի վրա։~~

~~***(3-րդ հոդվածը փոփ., լրաց. 09.04.07 ՀՕ-173-Ն, խմբ. 11.05.11 ՀՕ-157-Ն)***~~

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) փոստային կապ՝ փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն ապահովող կապի տեսակ, որը տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր է.

2) փոստային կապի ծառայություններ՝ գործողություն կամ գործունեություն փոստային առաքանու, հիբրիդային առաքանու ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման գծով.

3) ներհանրապետական փոստային կապի ծառայություններ՝ փոստային կապի ծառայություններ, որի դեպքում փոստային առաքանին ընդունվում, մշակվում և հանձնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

4) միջազգային փոստային կապի ծառայություններ՝ փոստային ծառայություններ, որի դեպքում փոստային առաքանին առաքվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ստացվում է այլ երկրներից և առաքվում Հայաստանի Հանրապետության տարածքում կամ տարանցիկով անցնում է Հայաստանի Հանրապետության տարածքով.

5) փոստային կապի ունիվերսալ ծառայություններ՝ Օրենքի 3.3 հոդվածի 1-ին մասով *սահմանված որակի չափանիշներին համապատասխան, բոլոր օգտվողների համար՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում նրանց գտնվելու վայրից, հասանելի, մշտական հիմունքներով փոստային կապի ծառայությունների նվազագույն շրջանակի մատուցում.*

6) փոստային առաքանի՝ *վերջնական տեսքով հասցեագրված առաքանի, որը ենթակա է ընդունման* փոստային կապի ծառայություններ մատուցողի կողմից կանոնակարգի *պահանջներին համապատասխան,* այդ թվում՝ նամակագրական թղթակցությունը, ինչպես

նաև գրքերը, կատալոգները, թերթերը, պարբերականները ու փոստային ծանրոցները, որոնք կարող են ունենալ կամ չունենալ առևտրային արժեք: Առաքանին համարվում է վերջնական տեսքով հասցեագրված, եթե այդ առաքանու, կամ դրա փաթեթավորման կամ ծրարի վրա առկա է փոստային վճարման պետական նշան կամ փոստային ծառայություն մատուցողի կողմից ճանաչված փոստային վճարման պետական նշանին համարժեք այլ նշան և այդ առաքանու կամ դրա փաթեթավորման կամ ծրարի վրա առկա է ստացողի հասցեի վերաբերյալ անհրաժեշտ նշում՝ փոստային ծառայություն մատուցողի կողմից այն առաքման նպատակով մշակելու համար.

7) հասարակ փոստային առաքանի՝ չգրանցվող փոստային առաքանի, որն ընդունման ժամանակ ուղարկողին անդորագիր չի տրվում և որը հանձնվում է ստացողին առանց ստորագրության.

8) գրանցվող փոստային առաքանի՝ փոստային առաքանի, որն ընդունվում է ուղարկողին անդորագրի հանձնումով, և ստացողին (օրինական ներկայացուցչին) հանձնվում է ստորագրությամբ՝ անձնագրի առկայության դեպքում.

9) գնահատված փոստային առաքանի՝ փոստային առաքանի, որն ընդունվում է ուղարկողի կողմից ներդրվածքի արժեքի գնահատմամբ, ուղարկողին անդորագրի հանձնումով, և ստացողին հանձնվում է ստորագրությամբ: Գնահատված արժեքի գումարի առավելագույն չափը սահմանվում է փոստային ծառայություններ մատուցողի կողմից.

10) նամակագրական թղթակցություն՝ ցանկացած ֆիզիկական կրիչով գրավոր թղթակցություն, որը ենթակա է փոխադրման և հանձնման՝ ուղարկողի կողմից այդ առաքանու կամ դրա փաթեթավորման կամ ծրարի վրա նշված հասցեով: Նամակագրական թղթակցությունը ներառում է հասարակ և գրանցվող նամակներ, փոստային բացիկներ, սեկոգրամներ, փաթեթներ և փոքր փաթեթներ, տպագրված իրեր, ինչպիսին է ուղիղ փոստը: Գրքերը, կատալոգները, պարբերական հրատարակությունները՝ ինչպիսին են թերթերը և պարբերականները չեն համարվում նամակագրական թղթակցություն.

11) ուղիղ փոստային առաքանի՝ փոստային առաքանու տեսակ, որն իր մեջ պարունակում է գովազդային, տեղեկատվական կամ հրապարակային նյութեր: Առաքանու ներդրվածքը պետք է պարունակի միատեսակ հաղորդակցություն կամ տեղեկատվություն,

որոնք չեն կարող փոփոխել առաքվող նյութերով հաղորդվող տեղեկությունների իմաստը, բացառությամբ այն տեղեկությունների, որոնցով սահմանվում են հասցեատիրոջ անունը, հասցեն, նույնականացման համարը և հասցեագրմանն առնչվող այլ տեղեկություններ.

12) փոստային ծանրոց՝ առևտրային արժեք ունեցող կամ չունեցող առաքանի, որի չափերը, քաշը և փաթեթավորումը սահմանվում են կանոնակարգերով.

13) սեկոգրամ՝ բացառապես կույրերի համար նախատեսված փոստային առաքանի, որը հանձնվում է բաց տեսքով, սեկոգրաֆիայի եղանակով գրված նամակագրական հաղորդագրություններով և հրատարակություններով, սեկոգրաֆիայի նշաններով՝ կլիշեներով, ձայնագրություններով, տիֆլոտեխնիկական միջոցներով.

14) սուրհանդակային կապի ծառայություններ՝ մեկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատուցվող փոստային գործունեության տեսակ, որի դեպքում փոստային առաքանին ուղարկողի պատվերով հավաքագրվում է իր բնակության, գտնվելու կամ գործունեության վայրում և առաքվում է ուղարկողի կողմից նշված հասցեատիրոջը: Ընդունումից մինչև առաքում ընկած ամբողջ ժամանակահատվածում՝ առաքանին ուղեկցվում է տվյալ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սուրհանդակի կողմից՝ առանց մշակման, փոխանակման կամ փոխանցման գործողություն իրականացնելու.

15) էքսպրես փոստային ծառայություններ՝ փոստային կապի գործունեության տեսակ, որի դեպքում առաջարկվում է փոստային առաքանու առավել կարճ ժամկետներում ընդունում և առաքում՝ այլ փոստային ծառայությունների համեմատ, և որը ներառում է նաև անհատականացված ծառայություններ՝ ուղարկողի և ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագրի համաձայն: Էքսպրես փոստային ծառայություն է համարվում նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի N 1 հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 52-րդ կետով սահմանված էքսպրես-բեռների առաքումը.

16) հատուկ կապի ծառայություն՝ սուրհանդակային կապի ծառայության տեսակ՝ հատուկ առաքանիների հավաքագրման, մշակման, փոխադրման և հանձնման համար.

17) հատուկ առաքանի՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ուղարկվող կամ ստացվող առաքանի, որը բացառապես պարունակում է օրենքով կամ միջազգային պայմանագրերով պաշտպանվող գաղտնի տեղեկատվություն կամ առարկաներ, ինչպես նաև թանկարժեք մետաղներ, քարեր կամ զարդեր.

18) հիբրիդային առաքանի՝ էլեկտրոնային նամակ (հաղորդագրություն), որը ընդունվում է փոստային կապի օպերատորի կողմից և տեղ է հասցվում հասցեատիրոջը նամակի (փոստային բացիկի) տեսքով, կամ նամակ (փոստային բացիկ), որը ընդունվում է փոստային կապի օպերատորի կողմից և տեղ է հասցվում հասցեատիրոջը էլեկտրոնային նամակի (հաղորդագրություն) տեսքով՝ էլեկտրոնային փոստին կամ էլեկտրոնային բաժանորդային արկղին:

19) էլեկտրոնային նամակ (հաղորդագրություն)՝ հեռահաղորդակցության ցանցի, ինտերնետի կամ էլեկտրոնային կրիչի միջոցով էլեկտրոնային ձևով ուղարկված տեղեկատվություն:

20) դրամական միջոցների փոստային փոխադրություններ՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն դրամական (փողային) փոխանցումներ.

20) փոստային առաքում՝ փոստային առաքանու ընդունում, մշակում, փոխադրում և հանձնում հասցեատիրոջը.

21) փոստային առաքանու ընդունում՝ *փոստային կապի օպերատորի կողմից ուղարկողից, այդ թվում փոստարկղերից հավաքագրված փոստային առաքանիների ձևակերպում՝ հետագա առաքման համար.*

22) փոստային առաքանու մշակում՝ *գործողությունների համալիր՝ փոստային առաքանիները տուփերի, պարկերի և տարաների մեջ խմբավորելու, վերափաթեթավորելու գծով՝ համապատասխան ուղեկցող փաստաթղթերի ձևակերպմամբ և արտադրական տարածքներում դրանց տեղափոխումը.*

23) փոստային առաքանու փոխադրում՝ *փոստային առաքանու փոխադրում (տեղափոխում) ընդունման կետից մինչև նշանակման վայրի արտադրական օբյեկտներ՝ հասցեատիրոջը տեղ հասցման և (կամ) հանձման համար.*

24) փոստային առաքանու հանձնում՝ *փոստային առաքանու տրամադրում անձամբ հասցեատիրոջը կամ լիազորված ներկայացուցչին.*

25) փոստային հասցե՝ տվյալների ամբողջություն, որը թույլ է տալիս փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորին որոշելու առաքման վայրը, որն առնվազն պարունակում է փոստային դասիչը, շենքի համարը, փողոցի և համայնքի անվանումները, երկրի անվանումը, կամ այլ նշում կամ տվյալ: Հասցեն պետք է նշված լինի փոստային առաքանու, ծրարի կամ փաթեթավորման վրա կամ առանձին ցուցակով այնպես, որ թույլ տա փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորին առաքանին առաքելու ուղարկողի կողմից նշված հասցեով.

26) **հասցեատեր (ստացող)՝** փոստային գործունեության ծառայություններից օգտվող, որին հասցեագրված է փոստային առաքանին, դրամական միջոցների փոստային փոխադրությունը, հեռագրային կամ այլ հաղորդագրությունը: Հասցեատերը կարող է փոստային օպերատորի կողմից սահմանված կարգով նշանակել ստացող, ով լիազորված է հասցեատիրոջ անունից ստանալու առաքանին.

27) ուղարկող՝ անձ, ով պատասխանատու է փոստային առաքանու ներդրվածքի համար, ում կամքով և ում անունից առաքանին հանձնվել է փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորին.

28) օգտվող՝ *ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, որն օգտվում է փոստային գործունեության ծառայությունից որպես ուղարկող կամ հասցեատեր.*

29) փոստային կապի օպերատոր՝ փոստային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի համաձայն՝ պահպանելով սույն օրենքով, ինչպես նաև փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգով սահմանված պայմանները և պահանջները.

30) սուրհանդակային կապի օպերատոր՝ միջազգային սուրհանդակային կապի օպերատոր կամ ներհանրապետական սուրհանդակային կապի օպերատոր՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական

անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի համաձայն՝ պահպանելով սույն օրենքով, ինչպես նաև սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգով սահմանված պայմանները և պահանջները.

31) փոստային կապի ազգային օպերատոր (նշանակված օպերատոր)՝ փոստային կապի օպերատոր, որը պատվիրակված է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև Համաշխարհային փոստային միության ակտերից բխող պարտավորությունների կատարումը և որը կրում է Հայաստանի Հանրապետության փոստի խորհրդանիշը.

32) կանոնակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած փոստային կապի գործունեության լիցենզիայի շրջանակներում փոստային կապի օպերատորի կամ սուրհանդակային կապի օպերատորի գործունեություն իրականացնող անձանց՝ տվյալ գործունեությանը վերաբերող տարածքային, տրանսպորտային միջոցների, տեխնիկական և տեխնոլոգիական նվազագույն չափանիշներ, ինչպես նաև փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման ընդհանուր սկզբունքները և պայմանները սահմանող սույն օրենքի 9-րդ հոդվածի «ը» կետով հաստատված նորմատիվ իրավական ակտ.

33) փոստային կապի ցանց՝ արտադրական, տեխնոլոգիական, տրանսպորտային և այլ ռեսուրսների համակարգ, որն օգտագործվում է փոստային առաքանիների ընդունման, մշակման, փոխադրման ու առաքման համար.

34) փոստային օբյեկտներ՝ փոստային օպերատորի առանձնացված ստորաբաժանումներ՝ ներառյալ փոստային առաքանիների տեսակավորման և փոխադրման կենտրոնները, օդանավակայաններին և երկաթուղային կայարաններին կից փոստի փոխադրման բաժանմունքները, փոստափոխանակման կետերը, փոստային բաժանմունքները, փոստային սպասարկման կետերը.

35) փոստային կապի երթուղի՝ փոստային օբյեկտների միջև փոստային փոխադրման երթուղի.

36) փոստարկղ՝ փոստային առաքանիների, բացառությամբ գրանցված փոստով ուղարկվող, հավաքման համար նախատեսված հատուկ փակվող արկղ.

37) փոստային բաժանորդային պահարան՝ հասցեատերերի կողմից հասարակ փոստային առաքանիներ և գրանցված փոստային առաքանիներ ստանալու մասին ծանուցումներ ստանալու համար բնակելի շենքերում տեղադրվող փակվող խցիկներով հատուկ պահարան.

38) փոստային անվանական պահարան՝ հասցեատերերի կողմից հասարակ փոստային առաքանիներ ստանալու համար որոշակի ժամկետով տրամադրվող՝ փոստային կապի օբյեկտներում տեղադրվող փակվող խցիկներով հատուկ պահարան.

39) հասանելիության կետեր՝ *այն ֆիզիկական տարածքները՝ այդ թվում փոստարկղերը, որտեղ ուղարկողները կարող են մուտք անել իրենց փոստային առաքանիները փոստային ցանց: Դրանք կարող են լինել հանրային վայրերում կամ փոստային* օպերատորի *տարածքում և նրա փոստային օբյեկտներում հանրության համար հատկացված տարածքների տեսքով.*

40) փոստային սպասարկման կետ՝ *փոստային օպերատորի կամ փոստային օպերատորի հետ պայմանագրային հիմունքներով երրորդ անձի կողմից շահագործվող* անշարժ կամ շարժական *հասանելիության* կետ, որտեղ՝ կախված հանգամանքներից և փոստային ծառայություն մատուցողից, օգտվողները կարող են օգտվել մի շարք փոստային ծառայություններից և այլ ծառայություններից.

41) փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման ժամկետ՝ փոստային կապի և սուրհանդակային կապի որոշակի ծառայությունների մատուցման ժամկետներից և նորմատիվներից բաղկացած ամբողջություն՝ փոստային և սուրհանդակային կապի օպերատորի սահմանած առանձին տեխնոլոգիական գործողությունների կատարման համար.

42) հսկիչ ժամկետներ՝ փոստային առաքանիների և դրամական միջոցների փոստային փոխադրությունների՝ փոստային կապի ընդունման վայրից մինչև փոստային կապի օբյեկտի հանձնման վայրն առաքման, ինչպես նաև փոստային կապի օբյեկտներում դրանց վերամշակման առանձին գործառնությունների համար սահմանված ժամանակ.

43) փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման սակագին՝ փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման վճարման համար սահմանված չափ.

44) փոստային վճարման պետական նշաններ՝ փոստային նամականիշ, ֆրանկոմեքենաների և նիշավորող մեքենաների դրոշմներ կամ այլ նիշեր, որոնք գործողության մեջ են դրվում փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից և հաստատում են նշանակված օպերատորի կողմից փոստային ծառայությունների մատուցման վճարումը.

45) ֆրանկոմեքենա և նիշավորող մեքենա՝ նամակագրական թղթակցության վրա փոստային ծառայությունների մատուցման վճարումը, տվյալ թղթակցության ընդունման ամսաթիվը և այլ տեղեկություն հաստատող փոստային վճարման պետական նշաններ դրոշմելու համար նախատեսված մեքենաներ.

46) փոստային դասիչ՝ փոստային ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքի փոստային հասցեների կամ դասիչների բաժանման թվանշային կամ տառային շարքերի համակարգ.

47) փոստային գաղտնիություն՝ տեղեկություն՝ փոստային կապի օպերատորի ծառայություններից օգտվողների անձնական տվյալների, փոստային հասցեի, փոստային առաքանիների, դրանց ներդրվածքի և գտնվելու վայրի մասին.

~~**Հոդված 3.1. Փոստային կապի գործունեության տեսակները**~~

~~Փոստային կապի գործունեության տեսակներն են փոստային կապի, պետական սուրհանդակային կապի և սուրհանդակային կապի ծառայությունները:~~

Հոդված 3.1. Փոստային կապի գործունեության տեսակները

1. Փոստային կապի գործունեության տեսակներն են՝ փոստային կապի, սուրհանդակային կապի և էքսպրես փոստային ծառայությունները:

2. Փոստային կապի ծառայություններ չեն համարվում՝

1) փոստային առաքանու փոխադրումը՝ առանց ընդունման, մշակման և հանձնման գործառույթների.

2) ինքնաառաքումը, նշանակում է անմիջապես ուղարկողի կողմից փոստային առաքանու հանձնում և այդպիսի հանձնմանը նախորդող և դրա հետ կապված գործողություններ: Իրավաբանական անձի դեպքում ինքնաառաքում է համարվում առաքումը, որն իրականացվում է այդ իրավաբանական անձի աշխատակիցների կողմից նույն իրավաբանական անձի համար:

Հոդված 3.2 Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ

1. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունները իրենց մեջ ներառում են մինչև 2 կիլոգրամ քաշով ներհանրապետական հասարակ, գրանցված նամակագրական թղթակցության ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը:

2. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունները ներառում են հետևյալ շրջանակը.

1) հասարակ նամակագրական թղթակցության՝ նամակների, փոստային բացիկների, փաթեթների և փոքր փաթեթների առաքման ծառայություններ.

2) գրանցված նամակագրական թղթակցության՝ նամակների, փոստային բացիկների, փաթեթների և փոքր փաթեթների առաքման ծառայություններ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը երաշխավորում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված շրջանակի մատուցումը: Այն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատվիրակում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման պարտավորությունը փոստային կապի ազգային օպերատորին:

4. Փոստային կապի ազգային օպերատորը՝ միջազգային փոստային կապի ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ներհանրապետական փոստային ծանրոցների առաքումը պետք է իրականացնի փոստային կապի բնագավառում լիազորված պետական

կառավարման մարմնի կողմից սահմանված հասանելիության պահանջներին համապատասխան:

5. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունները մատուցվում են փոխհատուցվող հրապարակային պայմանագրի հիման վրա:

6. Փոստային կապի ազգային օպերատորը պայմանագրային հիմունքներով պետք է ապահովի այլ փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորների ոչ խտրական մուտքը իր ենթակառուցվածքներին:

Հոդված 3.3 Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման որակի չափանիշները

1. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման *որակի չափանիշներն* են՝

1) Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների անընդհատություն՝ մշտական հիմունքներով փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցում, որն ապահովվում է փոստային բաժանմունքի աշխատանքային ռեժիմի, փոստային առաքանիների տեղ հասցման հաճախականության, փոստային առաքանիների հավաքագրման և փոստային առաքանիների առաքման ժամկետների նորմատիվների պահպանմամբ.

2) Տարածքային հասանելիության ապահովում, Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցում, որն ապահովվում է փոստային բաժանմունքների, հասանելիության կետերի, փոստային սպասարկման կետերի և փոստարկղերի տեղակայման նորմատիվների պահպանմամբ.

3) Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների տեխնոլոգիական և տարածքային անբաժանելիություն, որն ապահովում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցում, պահպանելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոստային առաքանիների առաքման տեխնոլոգիական միասնականությունը.

4) Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների միասնական սակագների կիրառում, որն ապահովվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում

միանման և միասնական սակագներով փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում նշված նորմատիվները հանդիսանում են փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման նորմատիվներ և հաստատվում են փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից:

Հոդված 4. Փոստային կապի բնագավառում գործունեության սկզբունքները

Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի բնագավառում գործունեության սկզբունքներն են՝

ա) փոստային կապի կամ սուրհանդակային կապի հաղորդակցության ազատության և գաղտնիության ապահովումը.

բ) փոստային կապի ունիվերսալ ծառայություններից օգտվելու մատչելիության, հասանելիության և ոչ խտրական փոստային կապի ունիվերսալ ծառայությունների տրամադրման ապահովումը.

գ) փոստային առաքանիների տարանցման ազատության և փոստային կապի բնագավառում միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման ապահովումը.

դ) փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների իրավունքների հավասարության ապահովումը.

ե) փոստային կապի կառավարելիության և հուսալիության ապահովումը.

զ) ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայություններ մատուցողի կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների կենսունակ և կայուն տրամադրումը:

(4-րդ հոդվածը փոփ. 11.05.11 ՀՕ-157-Ն)

Հոդված 6.2. Փոստային կապի բնագավառի գաղտնիության ապահովում

1. Պետությունը երաշխավորում է փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների ծառայություններից յուրաքանչյուր օգտվողի փոստային գաղտնիության իրավունքը: Փոստային գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

2. Փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորները պարտավոր են պահպանել փոստային կապի ոլորտում գաղտնիության ապահովման պահանջները: Փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների աշխատակիցները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մասնակցում են փոստային առաքանիների բացման գործընթացին, իրավունք չունեն հրապարակել փոստային գաղտնիության պահպանման հետ կապված տեղեկությունները, բացառությամբ օրենքով ուղղակիորեն սահմանված դեպքերի:

3. Փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների աշխատակիցները, ինչպես նաև այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք խախտել են փոստային գաղտնիությունը, ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները փոստային կապի բնագավառում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոստային կապի բնագավառում՝

ա) ***(կետն ուժը կորցրել է 09.04.07 ՀՕ-173-Ն)***

բ) սահմանում է փոստային կապի ազգային օպերատոր.

գ) լիազորում է փոստային կապի ազգային օպերատորին մատուցելու փոստային կապի ունիվերսալ ծառայություններ, Համաշխարհային փոստային միության ակտերին համապատասխան միջազգային փոստային կապի ծառայություններ և կրելու Հայաստանի Հանրապետության փոստի խորհրդանիշը.

դ) սահմանում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների կարգավորման հետևանքով փոստային կապի ազգային օպերատորի չստացած եկամուտների փոխհատուցման կարգը.

ե) սահմանում է փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին.

զ) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

է) հաստատում է փոստային կապի ոլորտում մոնիթորինգի իրականացման կարգը.

ը) հաստատում է փոստային կապի օպերատորի գործունեության և սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգերը:

Հոդված 10. Փոստային կապի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունները

Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի բնագավառում պետական կառավարումը և կարգավորումն իրականացնում է փոստային կապի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):

Լիազորված մարմինը՝

ա) իրականացնում է փոստային կապի բնագավառում պետական քաղաքականություն.

բ) օրենքով սահմանված կարգով իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզավորում.

գ) սահմանում է Հայաստանի Հանրապետության փոստային նամականիշերի պատկերը, թեման.

դ) ~~սահմանում~~ հաստատում է փոստային վճարման պետական նշանների նմուշները, անվանագները, տպաքանակը, գործողության ժամկետները և կազմակերպում է դրանց հրատարակումն ու տարածումը.

ե) սահմանում է փոստային օբյեկտների դասիչները.

զ) սահմանում է նամակագրական թղթակցության՝ փոստարկղերից հավաքման հաճախականությունը և փոստային առաքանիների անցման, դրամական միջոցների փոստային փոխադրությունների իրականացման հսկիչ ժամկետները.

է) ապահովում է գործող փոստային կապի ցանցերի գործունեությունն ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում.

ը) իրականացնում է գործող լիցենզիաների պահանջների և փոստային կապի ծառայությունների մատուցման կանոնների կիրառման նկատմամբ հսկողություն.

թ) իր իրավասության սահմաններում իրականացնում է փոստային կապի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության շահերը փոստային կապի միջազգային կազմակերպություններում.

ժ) աջակցում է փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների շուկայում ազատ և հավասար մրցակցությանը.

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ.

ժբ) հաստատում է փոստային կապի օպերատորների փոստային կապի երթուղիները և չվացուցակները.

ժգ) մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում փոստային կապի օպերատորի գործունեության և սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգերը:

ժդ) իրականացնում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման պարտավորության կատարման նկատմամբ հսկողություն.

ժե) հաստատում է Հայաստանի Հանրապետության փոստային վճարման պետական նշանների հրատարակման և գործողության մեջ դնելու, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառման կարգը.

ժզ) հաստատում է փոստային կապի գործունեության ոլորտի հաշվետվությունների և վիճակագրական տվյալների ներկայացման և վերլուծության իրականացման կարգը.

ժէ) հաստատում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման որակի նորմատիվները:

(10-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.05.11 ՀՕ-157-Ն)

~~Հոդված 12. Փոստային կապի բնագավառում գործունեության կառավարումն արտակարգ իրավիճակներում~~

~~Արտակարգ իրավիճակներում փոստային կապի բնագավառում գործունեության համակարգումն ու կառավարումն իրականացնում է լիազորված մարմինը՝ համագործակցելով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պետական կառավարման լիազորված մարմնի և այն մարմինների հետ, որոնց տնօրինության տակ գտնվում են փոստային կապի ցանցեր:~~

Հոդված 12. Փոստային կապի բնագավառում գործունեության կառավարումն ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում

1. Ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում փոստային կապի բնագավառում գործունեության համակարգումն ու կառավարումն իրականացնում է լիազորված մարմինը՝ համագործակցելով ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պետական կառավարման լիազորված մարմնի և այն մարմինների հետ, որոնց տնօրինության տակ գտնվում են փոստային կապի ցանցեր:

Հոդված 18[1]. Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման

սակագները և դրանց ձևավորման սկզբունքները

1. Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները սահմանում և վերանայում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգավորող հանձնաժողով):

2. Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների ձևավորման սկզբունքներն են՝

ա) փոստային կապի ունիվերսալ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը.

բ) ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը.

գ) հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը.

դ) ծառայությունների տեսակներով և առանձնահատկություններով պայմանավորված սակագների տարբերակումը.

ե) հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

~~3. Փաստաթղթերի հատուկ առաքման սակագնի ձևավորման հիմքում ընկած է ծախսածածկման սկզբունքը:~~

Հոդված 18[2]. Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների սահմանումը և կիրառումը

1. Սակագների սահմանման և վերանայման կարգը, այդ առնչությամբ փոստային կապի ազգային օպերատորի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը (հայտի փաթեթը) սահմանում է Կարգավորող հանձնաժողովը:

2. Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունվելուց 30 օր հետո: Սակագների գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքի, երբ սահմանված սակագների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա Կարգավորող հանձնաժողովը ընդունում է սակագնի սահմանման վերաբերյալ նոր որոշում:

3. Կարգավորող հանձնաժողովը կարող է սահմանել փոստային կապի ազգային օպերատորի կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայության երկարաժամկետ սակագին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրա ճշգրտման սկզբունքները:

4. Սահմանված սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձև:

5. Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես փոստային կապի ազգային օպերատորի, այնպես էլ Կարգավորող հանձնաժողովի նախաձեռնությամբ: Կարգավորող հանձնաժողովը սակագինը վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և որոշում է կայացնում փոստային կապի ազգային օպերատորի վերանայման հայտի փաթեթն ընդունելուց հետո՝ ~~90-օրյա ժամկետում~~ 80 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Փոստային կապի ազգային օպերատորը կարող է փոստային կապի ունիվերսալ ծառայությունները մատուցել Կարգավորող հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր սակագնով՝ բացառելով գնային խտրականությունը: Սակագների նման իջեցման դեպքում նոր սակագներ սահմանելիս Կարգավորող հանձնաժողովը հաշվի չի առնում սակագների իջեցման հետևանքով փոստային կապի ազգային օպերատորի վնասները:

7. Կարգավորող հանձնաժողովին հաշվետվություններ ներկայացնելու նպատակով Կարգավորող հանձնաժողովը փոստային կապի ազգային օպերատորի համար սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքներին, ազգային հաշվային պլանին և իրավական այլ ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ:

8. Փոստային կապի ազգային օպերատորը իր ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը (անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերով) ներկայացնում է Կարգավորող հանձնաժողով՝ վերջինիս սահմանած ձևերով և կարգով:

9. Ներկայացված հաշվետվությունների ու տեղեկատվությունների հավաստիության ճշգրտման նպատակով Կարգավորող հանձնաժողովն իրավասու է իրականացնելու կամ կազմակերպելու ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրություններ՝ պահանջելով հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր:

10. Կարգավորող հանձնաժողովը հաստատում է փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան:

(18[2]-րդ հոդվածը լրաց. 09.04.07 ՀՕ-173-Ն, փոփ. 11.05.11 ՀՕ-157-Ն)